

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԻԿԻ

### ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Ը. 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

**Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական  
տնտեսագիտական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ԻՇԽԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ  
**ՌՈՒԲԵՆ ԱՐՄԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու  
**ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հունիսի 15-ին՝  
ժամը 14<sup>00</sup>-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող  
ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսա-  
գիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 15-ին:

014 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տնտեսագիտության դոկտոր,  
պրոֆեսոր՝

Ս. Ա. Գևորգյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Վերջին քառորդ դարում Հայաստանի Հանրապետության զարգացումն ուղեկցվել է տարատեսակ բացասական գործընթացներով. բնակչության թվաքանակի նվազում, իրական եկամուտների անկում, հիմնական միջոցների հնացում, կրթության համակարգի անկում, «ուղեղների արտահոսք»: Թեպետ հաջողվել է լուծել նոր տնտեսակարգին անցման հիմնական խնդիրները, ձևավորվել է տնտեսության մասնավոր հատվածը և առաջացել են տնտեսության նոր ոլորտներ, այդուհանդերձ, ազատ շուկայական մրցակցությունը տևական հեռանկարում չի կարող ապահովել որակյալ աշխատուժի պահանջարկի օպտիմալ բավարարումը, նպաստել տնտեսական զարգացման խնդիրը լուծելուն:

Բոլոր երկրների զարգացման մակարդակը և տեմպերը վերջին տասնամյակներում ավելի ու ավելի են կախված գիտության և կրթության զարգացման աստիճանից: Ժամանակակից պայմաններում, երբ զարգացած երկրներում ձևավորվում է նոր տնտեսություն, որտեղ նշանակալի են դառնում գիտելիքի գործոնը և ինովացիաները, որոնց ազդեցությամբ փոխվում է բնակչության զբաղվածության կառուցվածքը, աճում է մտավոր աշխատանքի բաժնեմասն արտադրության մեջ ու նվազում հասարակության պահանջարկը ցածր որակավորված աշխատանքի նկատմամբ, հրատապ է դառնում երկրի տնտեսական աճի ու զարգացման լրացուցիչ աղբյուրների որոնման հարցը: Այդպիսի աղբյուրներից է բնակչության կրթության մակարդակը:

Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (ՏՀԶԿ) հետազոտությունները վկայում են, որ որքան բարձր է կրթության մակարդակը երկրում, այնքան մեծ է ՀՆԱ-ը և բարձր են տնտեսական զարգացման ցուցանիշները: Ըստ ՏՀԶԿ մասնագետների տվյալների՝ ուսումնառության տևողության մեծացումը 1 տարով հնարավորություն է ընձեռում մեծացնելու ՀՆԱ-ը 3-6%-ով: Բացի դրանից՝ բնակչության լավ կրթությունը դրական է ազդում նաև հասարակության կյանքի այլ ոլորտների վրա, օրինակ, պետական կառավարման որակի և սոցիալական ոլորտի վրա: Համաձայն այդ հետազոտությունների՝ ավելի ու ավելի շատ մարդիկ են ձեռք բերում բարձրագույն կրթություն: Զարգացած երկրներում տնտեսապես ակտիվ բնակչության 32 %-ն ունի բարձրագույն կրթություն: Բարձրագույն կրթությամբ մարդկանց բաժնեմասն ավելի նշանակալի է Կանադայում (43%), ԱՄՆ-ում (38%) և Ճապոնիայում (36%): Ուշագրավ է, որ ՀՀ ցուցանիշը բավական բարձր է՝ 29 % <sup>2</sup> և գրեթե մոտ է զարգացած երկրների միջին ցուցանիշին: Մինչդեռ այդպիսի բարձր ցուցանիշը չի անդրադառնում երկրի տնտեսական զարգացման և աճի վրա, ինչի վկայությունը ՀՆԱ-ի ցածր մակարդակն է՝ զարգացած երկրների համեմատ:

<sup>1</sup> OECD Indicators. Education at a Glance 2016. Published on September 15, 2016.

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, էջ 53:

Ակնհայտ է, որ բարձրագույն կրթությամբ մարդկանց մեծ բաժնեմասը տնտեսապես ակտիվ բնակչության մեջ, ՀՀ պարագայում, տնտեսական զարգացման երաշխիք չէ: Հետևաբար՝ կարող են լինել նաև այլ հիմնախնդիրներ՝ կապված բարձրագույն մասնագիտական կրթության և զբաղվածության կառուցվածքի, կրթության որակի, տնտեսության ինովացիոն հատվածների պակասի և դրանով պայմանավորված՝ համապատասխան որակավորմամբ մասնագետների նկատմամբ փոքր պահանջարկի:

Բարձրագույն կրթության սոցիալական դերի և տնտեսական աճի մեջ դրա ներդրման ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել ատենախոսին եզրակացնելու, որ վերջինս առաջանում է օգտագործված աշխատանքային և կապիտալ ռեսուրսների ծավալի մեծացմամբ, ինչպես նաև դրանց որակի բարելավմամբ՝ տեխնոլոգիաների և կրթության բնագավառում առաջընթացի հենքի վրա: Դրանով պայմանավորված՝ վերջին ժամանակներս նշանակալի ուշադրություն է դարձվում մարդկային կապիտալի՝ որպես տնտեսական աճի առաջնային լծակի ուսումնասիրությանը: Մարդկային կապիտալը սկսեցին դիտարկել որպես ներդրումային նախագիծ, որից սպասում են հետհատույց՝ ավելի բարձր եկամուտների և տնտեսական աճի ձևով: Մարդկային կապիտալի հիմնական բաղկացուցիչներից մեկի դերում դիտարկվում է բնակչության կրթությունը:

ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում, բարձրագույն կրթության համակարգի զարգացման և բարձրագույն կրթության մատչելիության ու որակի բարձրացման տեսանկյունից, տնտեսության մեջ բարձրագույն կրթությամբ տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավվածության մակարդակի բարձրացման և այդ ներուժի լիարժեք գործադրման հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորել է թեմայի, հետազոտության նպատակի ընտրությունը և խնդիրների առաջադրումը, աշխատանքի կառուցվածքը և հետազոտության մեթոդաբանությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցության գնահատումը, այդ առումով՝ բարձրագույն կրթության հետհատույցի բարձրացման հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Սահմանված նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի արդի վիճակը, բացահայտել զարգացման ձևավորված միտումները,
- բացահայտել բարձրագույն կրթության համակարգի հիմնական ցուցանիշները, որոնց շարժընթացը դրական կախվածության մեջ է տնտեսական զարգացման հետ,
- գնահատել տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցությունը,

- բացահայտել բարձրագույն կրթության հետհատույցի բարձրացման հիմնախնդիրները,
- մոդելավորել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի և տնտեսական զարգացման միջև առկա կապը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ բարձրագույն կրթության համակարգն է, իսկ առարկան՝ տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցությանն առնչվող հիմնահարցերը:

**Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:** Հետազոտության իրականացման համար որպես տեղեկատվական բազա են ծառայել մասնագիտական պարբերականներում հրատարակված հոդվածները, թեմային առնչվող հայալեզու, ռուսալեզու և անգլալեզու մասնագիտական գրականությունը, միջազգային տարբեր կազմակերպությունների զեկույցները, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև Կրթության և գիտության նախարարության հրատարակումները, ՀՀ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերը, ինտերնետային կայքերում տեղ գտած՝ թեմային առնչվող տեղեկատվությունը, սեփական հետազոտության արդյունքները:

Հետազոտության հիմնական տեսամեթոդական հիմք է հանդիսացել տեսական և գործնական տեղեկատվության համակարգային վերլուծությունը՝ վերջնական նպատակ հետապնդելով մշակելու մեթոդական մոտեցումներ՝ բարձրագույն կրթության համակարգը զարգացնելու, ինչպես նաև տնտեսական զարգացման վրա դրա ազդեցությունը մեծացնելու հետ կապված:

**Հետազոտության գիտական նորույթը:** Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ է հանդիսանում հետևյալը.

- գնահատվել է տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցությունը. բարձրագույն կրթությամբ աշխատուժի 1% հավելածը հանգեցնում է ՀՆԱ-ի 1.35 % աճին.
- առաջարկվել է ընդհանուր գործոնային արտադրողականության դետերմինանտների թիվը լրացնել ևս մեկ գործոնով և դրա հիման վրա մշակվել է՝ ա) տնտեսական աճի մոդել՝ «բարձրագույն կրթությամբ աշխատուժ» գործոնի հաշվառմամբ և բ) տնտեսական աճի գնահատման և կանխատեսման մոդել՝ հիմնված 4 խմբի (բուհական համակարգը բնութագրող ցուցանիշներ, աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշներ, գիտակրթական գործունեության ֆինանսական ցուցանիշներ, գիտության ոլորտը բնութագրող ցուցանիշներ) երկու տասնյակից ավելի փոփոխականների վրա:

**Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության հիմնական դրույթները պարունակում են մի շարք արդյունքներ, որոնք տեսականում կարող են օգտակար լինել ոլորտով հետաքրքրվող հետազո-

տողների համար, իսկ գործնականում կարող են պիտանի լինել պետության տնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում: Աշխատանքի «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են վերլուծության ընթացքում առաջացած առաջարկությունները, որոնք կարող են օգտակար լինել տնտեսական զարգացման պլան մշակելու, բարձրագույն կրթության ոլորտը վերափոխելու, հզորացնելու և տնտեսության շահերին ծառայեցնելու համար: Կատարված աշխատանքը կարող է հետաքրքրել, մասնավորապես, մարդկային կապիտալի, կրթության, գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և նորամուծությունների հիմնահարցերով զբաղվող մասնագետներին, ուսանողներին, ասպիրանտներին:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, բովանդակությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 122 մեքենագիր էջ՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, գիտական նորությունները, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

**«Տնտեսական զարգացման և բարձրագույն կրթության փոխառնչությունների տեսական հիմքերը»** առաջին գլխում ներկայացված են թեմային վերաբերող որոշակի տեսական դրույթներ, որոնք հիմնավորում են մարդկային կապիտալի, գիտատեխնիկական առաջընթացի, հետևաբար՝ նաև բարձրագույն կրթության համակարգի զարգացման դերը տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև ցույց է տրված հիմնախնդրի ուսումնասիրման միջազգային փորձը, բերված են ինչպես զարգացած ու զարգացող, այնպես էլ թույլ զարգացած երկրների օրինակները, ներկայացված են թեմային առնչվող հայրենական և արտասահմանյան մի շարք աշխատություններում ամփոփված հետազոտությունների հիմնական արդյունքները:

Կատարված վերլուծության հիման վրա ատենախոսը եզրակացնում է, որ ժամանակակից տնտեսագիտական միտքը մարդկային կապիտալի զարգացման հնարավորությունը տեսնում է անհատի կրթման գործընթացում նորարարությունների ներդրման, ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորինս արդյունավետ օգտագործման, կրթության և գիտական հետազոտությունների ոլորտը միմյանցից չտարանջատելու մեջ:

Մարդկային կապիտալի զարգացումը, որակավորված մասնագետների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը տնտեսության մեջ առաջնահերթ քայլ է Եվրամիության որդեգրած «Եվրոպա 2020» ռազմավարությունում<sup>3</sup>: Այն վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Եվրամիության երկրների տնտեսական վերականգնման միասնական պլան է, որում առաջին հերթին նշվում է «խելացի աճ» բառակապակցությունը, այսինքն՝ աճ՝ հիմնված որակավորված մասնագետների վրա:

Աշխատանքի առաջին գլխում հիմնավորվում է, որ Հայաստանի Հանրապետության համար բարձրագույն կրթության զարգացումը պետականորեն համարվում է տնտեսական զարգացման առանցնահերթ նախադրյալ: Դրա մասին են վկայում թե ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, թե ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունում նշվում է<sup>4</sup>, որ գիտության ոլորտի զարգացման ռազմավարական խնդիրների ապահովման հիմնական նպատակն է հասնել

<sup>3</sup> Арабей Елизавета. «Новая европейская стратегия «Европа 2020»», 2010г.  
<http://eulaw.ru/content/307>

<sup>4</sup> Գիտության ոլորտի զարգացման ռազմավարություն, 2010թ., էջ 8-9:

այն բանին, որ 2020 թ. Հայաստանի Հանրապետությունը դառնա գիտելիքի վրա հիմնված տնտեսություն ունեցող, կայուն զարգացող, գիտական հետազոտություններով միջազգայնորեն ճանաչված, տնտեսական և սոցիալական առաջընթացում նոր գիտելիքի ստեղծման ու օգտագործման աստիճանով զարգացած առաջատար երկրների շարքում գտնվող պետություն:

Հայաստանում կրթության ոլորտի և տնտեսական զարգացման միջև փոխկապվածություններին իրենց աշխատություններում անդրադարձել են հայրենական գիտնականները՝ արտադրական ֆունկցիա ներմուծելով գիտություն և կրթության գործոնները<sup>5</sup>: Մեկ այլ աշխատության մեջ հետազոտողների ուշադրության կենտրոնում են եղել Հայաստանի գիտակրթական համակարգը, կրթության ֆինանսավորման աղբյուրները, պետության գիտատեխնիկական քաղաքականության գերակայությունները<sup>6</sup>:

Գիտատեխնիկական առաջընթացը մի շարք տնտեսագետների կողմից համարվում է տնտեսական աճի կարևորագույն նախապայմաններից մեկը: Տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակակիր Ռոբերտ Սոլոուն տնտեսական աճի իր մոդելում<sup>7</sup> ընդգծում է գիտատեխնիկական առաջընթացի կարևորությունը: Նոբելյան մրցանակի մեկ այլ դափնեկիր Յան Թինբերգենը Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայում ներմուծեց գիտատեխնիկական առաջընթացի տեմպի ցուցանիշը<sup>8</sup>: Տնտեսական զարգացման գործում մարդկային կապիտալի արժևորմանն են ուղղված նաև MRW մոդելը և Էդվարդ Դենիսոնի ուսումնասիրությունները<sup>9</sup>:

Շտապազոտելով աշխարհի տնտեսապես զարգացած երկրների վիճակագրական տվյալները՝ Դենիսոնը եկել է այն եզրակացության, որ տնտեսական աճի ապահովման գործում ամենամեծ դերը խաղում են հենց գիտատեխնիկական առաջընթացին վերաբերող գործոնները: Մասնավորապես՝ 20-րդ դարում ԱՄՆ-ի տնտեսական հզորացումը 42 %-ով պայմանավորված է եղել գիտատեխնիկական առաջընթացին վերաբերող գործոններով: Դենիսոնի կատարած ուսումնասիրություններից հետո գիտատեխնիկական գործոնի, գիտելիքների առաջընթացի ներդրումը տնտեսական աճի մեջ մասնագիտական գրականությունում հայտնի է դարձել «Դենիսոնի մնացորդ» անվանումով:

Շտաքրքիր պարադոքս են բացահայտել Փրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Ալան Քրյուգերը և Ստոկհոլմի համալսարանի պրոֆեսոր Միքայել Լինդալը: Նրանք նկատում են<sup>10</sup>, որ կրթական համակարգի զարգացումը բերում է տնտեսա-

<sup>5</sup> Յու. Սուվարյան. Վ. Սարգսյան, Գ. Վարդանյան: «Գիտության և կրթության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա», «Բանբեր» ՀՊՏՀ, թ.1 (19) Ե.2010թ., 156 էջ:

<sup>6</sup> «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» Յու.Ս.Սուվարյան, Վ.Լ.Հարությունյան, Վ.Ա. Սարգսյան, Վ.Վ.Խաչատրյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե.2011թ., 150 էջ:

<sup>7</sup> Solow R.M. A Contribution to the Theory of Economic Growth // Quarterly Journal of Economics. — 1956. — № 70. — P. 65-94.

<sup>8</sup> «Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում»: Ուսումնական ձեռնարկ (ՀՊՏՀ, խմբ.՝ Ի.Տիգրայան, Հ. Հովհաննիսյան, Եր. Տնտեսագետ, 2011, 328 էջ), էջ 87:

<sup>9</sup> Նոյն տեղում՝ էջ 88-92:

<sup>10</sup> Alan B. Krueger & Mikael Lindahl, "Education for Growth: Why and for Whom?," Journal of Economic Literature, American Economic Association, vol. 39(4), pp. 1101-1136, December, 2001.



կան աճի միայն այն երկրներում, որտեղ կրթությունը պատմականորեն ցածր մակարդակի վրա է եղել: Նման երկրներում բարձրագույն կրթությունը իրոք դառնում է տնտեսական զարգացման համար շարժիչ ուժ: Իսկ այն երկրներում, որտեղ առանց այդ էլ կրթական համակարգը զարգացած է, դրանում նոր միջոցների ներդրումը անպայման չէ, որ օգուտների հանգեցնի:

Նշված պարադոքսի բացատրությունն ատենախոսը տալիս է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինակով: Այստեղ բնակչության մեծ մասը բարձր որակավորում ունի: Կրթությանը Նահանգներում համապետական նշանակություն է տրվում: Երկրում ներկայումս գործում է «Կրթության ազգային նպատակները» ծրագիրը<sup>11</sup>, որում շեշտվում է, որ կրթությունը կյանքի որակի հիմնական ցուցանիշն է: Այն տնտեսական հզորության և անվտանգության հիմքն է, գիտության և մշակույթի առաջընթացի գրավականը:

Վերը նշվածի պարադոքսալ հետևանքն այն է, որ գիտելիքների մեծ պաշարով զինված լինելով՝ ամերիկացի միջին վիճակագրական բնակիչը չի համաձայնվում կատարել իր որակավորումից ցածր աշխատանք, որը ցածր է նաև վարձատրվում: Արդյունքում, մի շարք գործատուներ ստիպված են լինում վարձել որակավորում չունեցող աշխատակիցների, իսկ որակավորված մասնագետների մոտ երկարում է աշխատանք գտնելու գործընթացը: Դրա համար էլ Միացյալ Նահանգներն անընդհատ արտերկրից էժան աշխատուժի կարիք է զգում:

Բարձրագույն կրթության դերն ու նշանակությունը տնտեսական զարգացման գործում շատ մեծ է Կանադայում: Աշխարհի ամենազարգացած պետություններից մեկում կրթության ֆինանսավորումը կազմում է ՀՆԱ-ի 7%-ից ավելին, ինչը ողջ աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից է<sup>12</sup>: Հյուսիսամերիկյան այս երկրում բարձրագույն կրթության որակը նույնպես ամենաբարձրերից է: Կրթական ծրագրերն այնպես են կառուցված, որ գիտական աստիճան ստանալուն պես ուսանողները անմիջապես կարողանում են անցնել դասախոսական աշխատանքի՝ առանց որևէ լրացուցիչ դասընթաց յուրացնելու: Իսկ այն ուսանողները, որոնք չեն ցանկանում գիտությամբ զբաղվել, հեշտությամբ աշխատանք են ձեռք բերում՝ իրենց ստացած գիտելիքին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնությունում կրթության մակարդակի և սոցիալ-տնտեսական ցուցանիշների միջև կապ գտնելու փորձ է արել Մ.Ագրանովիչը:

Զեկույցի<sup>13</sup> սկզբում Ագրանովիչը նշում է, որ Ռուսաստանի Դաշնությունը կրթության (հատկապես բարձրագույն կրթության) մակարդակով աշխարհի առաջատար երկրների շարքում է, սակայն դիտարկելով Ռուսաստանի՝ բարձագույն կրթու-

<sup>11</sup> Майбуров И. Высшее образование в развитых странах //Высшее образование в России. – 2003. – №. 2., с. 132-144.

<sup>12</sup> Пыж Н. Н. Особенности системы высшего образования в Канаде //Вектор науки Тольяттинского государственного университета. Серия: Педагогика, психология. – 2013. – №. 1 (12)., с.212-214.

<sup>13</sup> М.Л. Агранович. "Связь качества образования и социально-экономических показателей", с.1-13.

<http://docplayer.ru/26542405-M-l-agranovich-svyaz-kachestva-obrazovaniya-i-socialno-ekonomicheskikh-pokazateley.html>

թյուն ունեցող բնակչության մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ և սոցիալ-տնտեսական ցուցանիշները (մեկ շնչին ընկնող ՀՆԱ և Ջիննիի գործակից), և համեմատելով դրանք կրթության նմանատիպ մակարդակ ունեցող երկրների ցուցանիշների հետ, մասնագետը նշում է, որ Ռուսաստանում կրթության մակարդակի սոցիալ-տնտեսական էֆեկտը բավական փոքր է:

Փորձելով գտնել այս անհամապատասխանության պատճառները՝ Ագրանովիչը հաշվարկում է Ռուսաստանում կրթության միջին սպասված տևողությունը, որը երկրում կազմում է 15.8 տարի, և նշում, որ այս ցուցանիշը համեմատելով սոցիալ-տնտեսական ցուցանիշների հետ, ավելի իրական պատկեր է ստացվում, և եթե կրթության մակարդակը արտացոլվի այս ցուցանիշով, ապա Ռուսաստանը կլինի այնպիսի երկրների կողքին, ինչպիսիք են Ուրուգվայը, Լատվիան, Լիտվան, Իսրայելը:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի օրինակին է անդրադառնում Լոնդոնի համալսարանի Կրթության ինստիտուտի մասնագետ Վինսենտ Կարպենտերը<sup>14</sup>: Ուսումնասիրելով եվրոպական երկու առաջատար երկրների բարձրագույն կրթության ցուցանիշները 1920-ական թվականներից սկսած և հատկապես անդրադառնալով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տիրող իրավիճակին՝ հողվածի հեղինակը հանգում է այն եզրակացության, որ երկու երկրներում էլ տնտեսական աճի ապահովման կարևոր գործոն է հանդիսացել կրթական ցուցանիշների դինամիկան, մասնավորապես՝ համալսարանների ծախսերի ավելացումը, բարձրագույն կրթություն ստացողների թվաքանակի կտրուկ աճը, կրթության պետական ֆինանսավորումը, կրթության միջին տևողության աճը և այլն:

Ժամանակային հարուստ շարքերով վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծություն է կատարվել 2006 թ. Կարիբյան կղզիներում<sup>15</sup>: Այստեղ հետազոտելով 1964-1998թ.թ. ժամանակային շարքերը՝ վերլուծության հեղինակները հանգել են այն եզրակացության, որ կրթության վրա կատարվող ծախսերի և ՀՆԱ աճի միջև ուժեղ կապ կա ճամայկայում: Բարբադոսում ու Տրինիդադ և Տոբագոյում այդ կապը թույլ է, իսկ տարածաշրջանի մյուս երկրներում իսպառ բացակայում է: Վերլուծությունը կատարվել է սխալների ուղղման վեկտորային մոդելի հիման վրա, իսկ մոդելի որակական մասը հիմնավորվել է Դիքի-Ֆուլերի<sup>16</sup> և Գրեյնջերի<sup>17</sup> թեստերով:

**«ՀՀ բարձրագույն կրթության համակարգի արդի վիճակը և միտումները փնտրեսական զարգացման համարեքստում»** երկրորդ գլխում իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի համապարփակ վերլուծություն, կատարվել են

<sup>14</sup> Carpentier V. Funding in higher education and economic growth in France and the United Kingdom, 1921-2003 //Higher Education Management and Policy. – 2006. – T. 18. – №. 3. – pp. 1-22.

<sup>15</sup> Francis B. et al. Education and development in the Caribbean: a cointegration and causality approach //Economics Bulletin. – 2006. – T. 15. – №. 2. – pp. 1-13.

<sup>16</sup> Dickey D. A., Fuller W. A. Distribution of the estimators for autoregressive time series with a unit root //Journal of the American statistical association. – 1979. – T. 74. – №. 366a. –pp. 427-431.

<sup>17</sup> Granger C. W. J. Some recent development in a concept of causality //Journal of econometrics. – 1988. – T. 39. – №. 1-2. – pp. 199-211.

տարածաշրջանային և միջազգային համեմատություններ, ներկայացվել են բարձրագույն կրթության ոլորտում ՀՀ մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը, բացահայտվել են որոշ օրինաչափություններ բարձրագույն կրթության համակարգի և տնտեսական զարգացման ցուցանիշների շարժընթացի միջև:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կառավարման մեխանիզմները, բացահայտված է օրենսդրական դաշտը, մասնավորապես՝ ներկայացված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի<sup>18</sup> և «Կրթության մասին» ՀՀ օրենքի<sup>19</sup> որոշ հոդվածներ: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով հաստատվում են մեր երկրում բարձրագույն և հետբուհական կրթության փուլերը: Դրանք են՝<sup>20</sup>

1. Բարձրագույն մասնագիտական կրթություն՝ առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթություն:
2. Հետբուհական մասնագիտական կրթություն՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն:
3. Լրացուցիչ կրթություն՝ մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումն ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթություն:

Տվյալ պարագրաֆում ներկայացված են նաև Հայաստանի կողմից ստորագրված Բոլոնյան հռչակագրի հիմնադրույթները, բերված են բարձրագույն կրթությանը վերաբերող մի քանի պետական ծրագրերի, ինչպես նաև մասնավոր ընկերությունների կողմից կատարված ուսումնասիրությունների հիմնադրույթները, որոնք բացահայտում են ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում ուսումնասիրված են միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից հաշվարկվող կարևոր ցուցանիշներ, որոնցով որոշվում են այս կամ այն երկրի կրթական համակարգի, մարդկային կապիտալի կուտակման տեմպի մակարդակները: Վերոնշյալ ցուցանիշներն են՝ մարդկային կապիտալի զարգացման համաթիվը, կրթության համաթիվը, բարձրագույն կրթական ազգային համակարգերի վարկանիշը, գիտահետազոտական ակտիվության մակարդակը, գիտելիքահենք տնտեսության համաթիվը: Բոլոր ցուցանիշների գծով համեմատություն է կատարվել Հայաստանի և տարածաշրջանի մյուս երկրների, ինչպես նաև աշխարհի զարգացած տնտեսություն ունեցող երկրների և այս կամ այն ցու-

<sup>18</sup> «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2004 թ. դեկտեմբերի 14-ին:


<sup>19</sup> «Կրթության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1999 թվականի ապրիլի 14-ին:

<sup>20</sup> «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք՝ գլուխ 1, հոդված 3:

ցանհիշով առաջատարների հետ: Մասնավորապես՝ ՀՀ-ը բավական բարձր դիրք է զբաղեցնում կրթության համաթվով՝ 63-րդ հորիզոնականը աշխարհում <sup>21</sup>: Այս ցուցանիշով Հայաստանը հետ է մնում տարածաշրջանի երկրներից միայն Վրաստանից, մի փոքր գերազանցում է Ադրբեջանին, էականորեն առաջ է իրանից և Թուրքիայից:

Աշխատանքի տվյալ հատվածում ատենախոսը ներկայացրել է լավագույն բուհերը ողջ աշխարհի, նախկին ԽՍՀՄ երկրների և Հայաստանի կտրվածքով: Մասնավորապես՝ նախկին ԽՍՀՄ երկրների լավագույն բուհերի ցանկում 2013 թ. դրությամբ Երևանի պետական համալսարանը զբաղեցրել է 11-րդ հորիզոնականը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում ատենախոսը վերլուծել է ՀՀ բարձրագույն կրթության համակարգը բնութագրող ցուցանիշները, ներկայացրել վերջին տարիների ընթացքում դրանց փոփոխությունները՝ փորձելով բացահայտել դրանց և տնտեսական զարգացման փոխառնչությունները: Այսպես, 2000 թ. ի վեր բուհերի քանակը նվազել է՝ 90-ից հասնելով 60-ի, բուհերում սովորողների թվաքանակը աճել է՝ գազաթնակետին հասնելով 2008-09 թթ.: Վերջին տարիներին խիստ նվազել է անվճար համակարգում սովորողների բաժնեմասը (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1.** Անվճար ուսուցմամբ ընդունվածների մասնաբաժինը ընդունվածների ընդհանուր թվում <sup>22</sup>

Չնայած ուսանողների թվի աճին, պրոֆեսորադասախոսական համակազմի թվաքանակը գրեթե չի փոխվել: Այսպես, 2000 թ.-ին հանրապետությունում 60726 ուսանողին դասավանդել է 11643 դասախոս, իսկ 2015 թվականին, երբ ուսանողների թիվը կազմել է 84591, պրոֆեսորադասախոսական կազմի անդամների թիվը նույնիսկ ավելի ցածր է եղել, ինչ 15 տարի առաջ՝ 11197:

Այսպիսով, ուսանողների թվաքանակը մեկ դասախոսի հաշվով 2015 թ. դրությամբ կազմել է 7.5՝ 2000 թ.ի նույն ցուցանիշի 5.2 արժեքի դիմաց: Երբ նախորդ տարվա ընդունվածների «բում»-ից հետո 2009-ին սովորողների թվաքանակը

<sup>21</sup> Աղբյուրը՝ Human Development Reports: Education Index <http://hdr.undp.org/en/content/education-index>

<sup>22</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (2001, 2016) տվյալների հիման վրա:

դարձել է 114629 (2000 թ. համեմատ 88.7 %-ով ավելի), դասախոսների թիվը եղել է 12 196 (ընդամենը 0.8 %-ով ավելի, քան 2000 թ.), և այդ տարի մեկ դասախոսի բեռնվածությունը կազմել է 9.4 ուսանող: Ընդ որում, 2010 թ-ից հետո ուսանողների թվաքանակը սկսել է կրճատվել: Ելնելով նշվածից, ատենախոսը եզրակացրել է, որ **2000-ական թ.թ. տեղի ունեցած ընդունելության «բում»-ը չի հանգեցրել պրոֆեսորադասախոսական համակազմի ավելացմանը, մինչդեռ մեկ տարվա ընդունվածների թվի խիստ նվազման արդյունքում հարյուրավոր դասախոսներ կորցրել են իրենց աշխատանքը**, ինչը, ըստ ատենախոսի, բացասական երևույթ է. վտանգվում է կրթության որակը, հետևաբար՝ ապագա մասնագետների որակական հատկանիշները:

Երկրորդ գլխում ներկայացված են նաև զբաղվածների թիվը՝ ըստ կրթական աստիճանի (աղյուսակ 1) և միջին եկամուտները՝ ըստ կրթական աստիճանի (աղյուսակ 2):

**Աղյուսակ 1**

Զբաղվածների թիվը ՀՀ-ում՝ ըստ կրթական աստիճանի, հազ. մարդ (2008-2015թ.թ.)<sup>23</sup>

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Զբաղվածներ, ընդամենը, հազար մարդ	1183,1	1152,8	1185,2	1175,1	1172,8	1163,8	1133,5	1072,6
Բարձրագույն, հետբուհական	248,7	261	269,2	294,9	295	309,4	347,3	311,7
Միջին մասնագիտական, թերի բարձրագույն	274,4	271,7	277,6	278,1	275,5	272,1	230,8	212
Նախամասնագիտական (արհեստագործական)	46,2	36,2	32	28,7	26,6	30,6	35,1	29,6
Միջանակարգ ընդհանուր	500,2	476,4	502,5	478,4	483,7	473	469,1	461,7
Հիմնական ընդհանուր	94,8	83	87,9	81,9	78,9	71	47,6	53,8
Տարրական, ոչ լրիվ տարրական	18,9	24,5	15,9	13,2	13,2	7,6	3,6	3,8

Այսպիսով, 2015թ. դրությամբ ՀՀ-ում զբաղվածների թվում գերակշռում են միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողները, նրանց հաջորդում են բարձրագույն և հետբուհական կրթությամբ զբաղվածները, հիմնական միջին մասնագիտական, թերի բարձրագույն կրթություն ունեցողները: Զբաղվածների թվում շատ փոքրաթիվ զանգվածն ունի միայն հիմնական ընդհանուր, նախամասնագիտական կամ տարրական, ոչ լրիվ տարրական կրթություն:

Միջին եկամուտների բաշխումը ՀՀ-ում կատարվում է օրինաչափ՝ ըստ կրթական մակարդակի: Ամենից շատ վաստակում են բարձրագույն և հետբուհական կրթությամբ զբաղվածները, այնուհետև միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն ունեցողները, նրանց հաջորդում են կրթական մյուս մակարդակների զբաղվածները:

<sup>23</sup>Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (2009-2016) տվյալների հիման վրա:

Միջին եկամուտները ՀՀ-ում՝ ըստ կրթական աստիճանի, դրամ (2009-2013թ.թ.)<sup>24</sup>

	2009	2010	2011	2012	2013 <sup>25</sup>
Միջին եկամուտ, դրամ	67326	72425	78408	85812	91697
Բարձրագույն, հետբուհական	90123	97041	95794	105135	108738
Միջին մասնագիտական, թերի բարձրագույն	61000	67064	73000	80531	84882
Նախամասնագիտական (արհեստագործական)	60975	61073	74799	64246	78414
Միջնակարգ ընդհանուր	58956	63255	71704	77122	84383
Հիմնական ընդհանուր	49426	50693	55802	74470	70685
Տարրական, ոչ լրիվ տարրական	39834	52613	-	-	-

**«ՀՀ տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցության գնահատման մեթոդաբանության բարելավման մուտքագրումները»** երրորդ գլխում փորձ է արվել երկու տարբեր մոդելի կիրառմամբ գնահատել և կանխատեսել ՀՀ տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցության չափը:

Առաջին պարագրաֆում ցուցչային արտադրական ֆունկցիայում **ներմուծվել է ընդհանուր գործոնային արտադրողականության գնահատման նոր գործոն՝** դրա օգնությամբ ցույց տալով բարձրագույն կրթությամբ աշխատուժի դերը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործում:

$$Q = A * K^{\alpha} * L_1^{\beta_1} * L_2^{\beta_2}, \quad (1)$$

որտեղ  $Q$ -ն համախառն ներքին արդյունքն է,

$K$ -ն՝ կապիտալը,

$L_1$ -ը բարձրագույն կրթությամբ աշխատուժն է,

$L_2$ -ը՝ բարձրագույն կրթություն չունեցող աշխատուժը,

$A$ -ն տեխնոլոգիական գործակից է,

$\alpha$ -ն,  $\beta_1$ -ն ու  $\beta_2$ -ը համապատասխանաբար կապիտալի, բարձրագույն կրթությամբ աշխատուժի և բարձրագույն կրթություն չունեցող աշխատուժի առաձգականության գործակիցներն են:

Կառուցված մոդելում կապիտալի առաձգականության գործակիցը հավասար է 0.4, իսկ բարձրագույն կրթությամբ և բարձրագույն կրթություն չունեցող աշխատուժերի առաձգականության գործակիցները, համապատասխանաբար, կազմել են 1.35 և -0.78: Սա նշանակում է, որ **բարձրագույն կրթությամբ աշխատուժի 1% հավելածը ավելացնում է երկրի ՀՆԱ-ը 1.35 տոկոսային կետով:** Ստացվել է, որ արտադրության «կապիտալ», «բարձրագույն կրթությամբ աշխատուժ» և

<sup>24</sup>Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում (2010-2013) հրապարակումների հիման վրա:

<sup>25</sup> 2013 թվականից հետո տվյալ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ-ի կողմից չի հաշվարկվում:

«բարձրագույն կրթություն չունեցող աշխատուժ» գործոններից **առաձգականության ամենաբարձր գործակիցը հենց բարձրագույն կրթությամբ աշխատուժինն է:**

Պարագրաֆի վերջում կառուցված մոդելի հիման վրա ատենախոսը կատարել է կանխատեսում և ստացել, որ տնտեսության զարգացման վերջին տարիների միտումների պահպանման դեպքում 2018 թ. կանխատեսվող տնտեսական աճին հասնելու համար բարձրագույն կրթություն ունեցող աշխատողների թվաքանակը պետք է ավելանա 2.72 %-ով:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում ներկայացվել է ատենախոսի կառուցած էկոնոմետրիկ մոդելը, որի մեջ ներառվել են բարձրագույն կրթությանը վերաբերող երկու տասնյակից ավելի ցուցանիշներ: Մոդելի կառուցման տարբեր փուլերում աշխատելով սկզբնական ցուցանիշների հետ՝ ստացվել է նշանակալի **5 գործոններից բաղկացած ռեգրեսիոն հավասարում**, որի հիման վրա կատարվել է ՀՆԱ ծավալի կանխատեսում: Հավասարումն ունի հետևյալ տեսքը.

**$GDP = 2\,508\,600 + 22.321\,BAC + 946.476\,SPU + 318.899\,SR\_vol - 8729.359\,PPU - 288.203\,Sci\_workers$** , որտեղ

GDP-ն Համախառն ներքին արդյունքն է՝ հիմնական գներով,

BAC-ը՝ բակալավրիատի շրջանավարտների թվաքանակը,

SPU-ն՝ մեկ բուհի հաշվով ուսանողների թվաքանակը,

SR\_vol-ը՝ գիտահետազոտական աշխատանքների ծավալը,

PPU-ն՝ մեկ բուհի հաշվով դասախոսների թվաքանակը,

Sci\_workers-ը՝ գիտական աշխատողների թվաքանակը:

Ռեգրեսիոն հավասարման օգնությամբ կատարվել է ՀՆԱ-ի ծավալի կանխատեսում, ըստ որի՝ իրական ՀՆԱ-ը 2018 թվականին կկազմի 6 152 898 մլն. դրամ:

**«Եզրակացություններ»** բաժնում ամփոփված են հետևյալ հիմնական եզրակացությունները և առաջարկությունները.

1. Բարձրագույն կրթության համակարգի և տնտեսական զարգացման միջև գոյություն ունի դրական կախվածություն, ինչի մասին են վկայում բազմաթիվ երկրներում իրականացված հետազոտությունները և կազմված մոդելները: Ազդեցության չափը պայմանավորված է երկրի աշխարհաքաղաքական դիրքով, կրթության հանդեպ պատմականորեն ձևավորված պահանջներով և աշխարհայացքով, տնտեսության ճյուղային կառուցվածքով և այլն: Ընդհանուր առմամբ՝ բարձրագույն կրթության զարգացումը հանգեցնում է տնտեսական զարգացման:
2. Բարձրագույն կրթության համակարգերի կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությունը հիմք է դրա տեղայնացման հետ կապված հետևյալ առաջարկությունների համար.

- 2.1 Ամրապնդել համալսարան-տնտեսություն կապը՝ համալսարաններում իրականացվող հետազոտությունների արդյունքների ներդրման և ըստ աշխատաշուկայի պահանջարկի շրջանավարտներին աշխատանքի տեղավորման դյուրինացման համար:
  - 2.2 Ստեղծել բուհերի աստիճանակարգման յուրօրինակ համակարգ, որում յուրաքանչյուր բուհի տված ավարտական վկայականը, կախված տվյալ բուհի զբաղեցրած դիրքից, հնարավորություն կընձեռի աշխատել համապատասխան ձեռնարկությունում և զբաղեցնել համապատասխան պաշտոն:
3. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի ուսումնասիրությունը վեր է հանում ոլորտում առկա խնդիրները: Դրանցից հիմնականներն են բուհերում գիտահետազոտական աշխատանքների փոքր ծավալը, ստացած գիտելիքները գործնականում կիրառելու սակավ հնարավորությունները, բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման ցածր մակարդակը, «բուհ-աշխատաշուկա» համագործակցության ցածր մակարդակը, կրթական համակարգում մենեջերների թվաքանակի և որակի պակասը, ուսուցման գործընթացում ուսանողին անհատական մոտեցում ցուցաբերելու բացակայությունը, ուսումնական գրականության հնացած ֆոնդը և գրադարանների գործունեության ժամանակակից միտումների բացակայությունը: Նշված խնդիրների լուծման կամ մեղմման նպատակով առաջարկվում է՝
- 3.1 Համալսարաններում ստեղծել գիտահետազոտական կենտրոններ, որոնց աշխատանքներում ներառված կլինեն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները, մագիստրանտներն ու ասպիրանտները:
  - 3.2 Ավելացնել բուհերում գործնական պարապմունքների տեսակարար կշիռը. դրանց ընթացքում պարբերաբար հրավիրել ոլորտում հայտնի մասնագետների, որոնց տված գիտելիքները թեկուզ և սեղմ ժամկետում կլինեն պիտանի գործնական տեսանկյունից, իսկ դասապրոցեսը ուսանողի համար կդառնա էլ ավելի հետաքրքիր:
  - 3.3 Գործատուներին գործնականում ներգրավել մասնագետների պատրաստման որակի կատարելագործման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներում:
  - 3.4 Հիմնովին վերափոխել ուսումնական փորձառնությունների համակարգը. ստեղծել այնպիսի միջավայր, որ փորձառնությունը ուսանողի համար դառնա աշխատանք գտնելու իրական միջոց, այլ ոչ թե լոկ ուսումնական ծրագրով նախատեսված պարտականություն:
  - 3.5 Ավելացնել բուհերի պետական ֆինանսավորման մակարդակը, այդ թվում՝ պետպատվերով տեղերի թվաքանակը՝ որպես կրթության որակի բարձրացման լրացուցիչ խթան:



4. Բուհերի դասախոսական համակազմի ծերացումն ի վերջո կարող է հանգեցնել ամբիոնների, գիտական դպրոցների և մասնագետների պատրաստման առանձին ուղղությունների փակվելուն: Շրջանավարտները և գիտությունների թեկնածուները (հատկապես լավագույնները) պաշտպանությունից հետո հազվադեպ են մնում աշխատելու ուսումնական հաստատություններում: Անհրաժեշտ է բուհերում մշակել երիտասարդ կադրերի խթանման քաղաքականություն, որը նույնպես կրթության որակի բարձրացման լրացուցիչ խթան կհանդիսանա: Ի վերջո, բարձրագույն ուսումնական հաստատությունը նույնպես պետք է դառնա աշխատանքի շուկայում մրցակցություն ցուցաբերող ինքնուրույն և կայացած սուբյեկտ:
5. Բարձրագույն կրթությանը և գիտությանը վերաբերող մի շարք ցուցանիշների ուսումնասիրությունը տարածաշրջանային մակարդակով վերհանում է Հայաստանի Հանրապետության մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը: Հարևան երկրների համեմատ Հայաստանի դիրքերը փոքր-ինչ առավել են՝ ըստ կրթության համաթվի և ըստ գիտահետազոտական ակտիվության մակարդակի դասակարգման: Գիտելիքահենք տնտեսության մակարդակով Հայաստանը հարևան պետությունների հետ գրեթե հավասար դիրք է զբաղեցնում, իսկ մարդկային կապիտալի զարգացման համաթվով զիջում է տարածաշրջանի բոլոր երկրներին:
6. Բարձրագույն կրթությամբ աշխատուժը տնտեսական զարգացման լուրջ խթան է հանդիսանում, ինչի մասին են վկայում վերջին տարիների վիճակագրական տվյալները: Ցուցային արտադրական ֆունկցիայում ընդհանուր գործոնային արտադրողականության նոր գործոնի ներմուծման հիման վրա կատարված հետազոտությունը փաստում է, որ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների թվաքանակի հավելվածը վերջին տարիներին նպաստել է տնտեսական զարգացմանը, մինչդեռ որակավորում չունեցող աշխատողների շարժընթացը բացասականորեն է կապված ՀՆԱ-ի շարժընթացի հետ: Մոտ ապագայում բարձրագույն կրթություն ունեցող աշխատողների թվաքանակի ավելացումը բերելու է տնտեսության մեջ նոր դրական զարգացումների: Միաժամանակ, շատ կարևոր է, որ բարձրագույն կրթությամբ մարդկանց թվաքանակի աճի հետ մեկտեղ զարգանան նաև նրանց մասնագիտական որակները: Միաժամանակ, անհրաժեշտ է գործադրել երիտասարդ կադրերին մարզերում աշխատանքի տեղավորելու տնտեսական մեխանիզմ:
7. Տնտեսաչափական մոդելի շրջանակում իրականացված հետազոտությունները բացահայտում են բարձրագույն կրթության համակարգի՝ տնտեսական զարգացման տեսանկյունից առավել նշանակալի գործոնները՝ բակալավրիատի շրջանավարտների թվաքանակը, մեկ բուհի հաշվով դասախոսների թվաքանակը, մեկ բուհի հաշվով ուսանողների թվաքանակը, գիտահետա-

զոտական աշխատանքների ծավալը, գիտական աշխատողների թվաքանակը:

8. Նպատակահարմար կարող է լինել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից բարձրագույն կրթությանը վերաբերող ցուցանիշների հավաքագրման շրջանակի ընդլայնումը. բարձրագույն կրթությամբ զբաղվածների և գործազուրկների թվաքանակ (տվյալները հասանելի են փոքր քանակությամբ տարիների համար), բարձրագույն կրթությամբ զբաղվածների միջին ամսական եկամուտներ (այլևս չի հաշվարկվում) և այլն: Պատաստված մասնագետների թվաքանակը՝ ըստ մասնագիտական խմբերի, տնտեսական զարգացման ցուցանիշների հետ համեմատելու համար նպատակահարմար է վերադառնալ մասնագիտական խմբերի բաժանման նախկին մեթոդաբանությանը, երբ մասնագիտական խմբերի բաժանումը կատարվում էր ըստ կոնկրետ մասնագիտության, այլ ոչ թե հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների տարանջատման: Տվյալների նմանատիպ բազա ունենալու դեպքում տարիներ հետո հնարավոր կլինի բացահայտել տնտեսական զարգացման տեսանկյունից առավել շահավետ մասնագիտությունները և պետական ֆինանսական միջոցներն ուղղել կրթական համապատասխան ոլորտներ:

### **Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝**

1. Արզումանյան Հ.Ա. «Տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցության գնահատման տեսամեթոդական հիմքերը» // «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Երևան, Տնտեսագետ, 2015, էջ 56-63:
2. Արզումանյան Հ.Ա. «ՀՀ-ում բարձրագույն կրթության և տնտեսական զարգացման ցուցանիշների կապի որակական վերլուծությունը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» 1-2 (197-198) Երևան, 2017, էջ 54-56:
3. Արզումանյան Հ.Ա. «Բարձրագույն կրթությամբ աշխատուժի դերը ՀՀ տնտեսական զարգացման գործում՝ Քոբ-Դուզլասի արտադրական ֆունկցիայի հիման վրա» // «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, #1 հունվար-մարտ, Երևան, 2017, էջ 154-161:
4. Արզումանյան Հ.Ա. «ՀՀ տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցության գնահատումը էկոնոմետրիկ մոդելի կիրառմամբ» // «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, #1 հունվար-մարտ, Երևան, 2017, էջ 162-172:

## АРЗУМАНЯН АРУТЮН АЛИКОВИЧ

### ОЦЕНКА И ПРОГНОЗИРОВАНИЕ ВЛИЯНИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ НА ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02- «Экономика, управление хозяйством и его сферами». Защита диссертации состоится 15-го июня 2017 года, в 14<sup>00</sup> часов, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

#### РЕЗЮМЕ

В последнее время все большее внимание сосредоточено на изучение человеческого капитала, как основного рычага экономического развития. Человеческий капитал рассматривается как инвестиционный проект, от которого ожидается компенсация в виде высоких доходов и экономического роста. В роли одного из основных компонентов человеческого капитала рассматривается образование населения.

Актуальность темы, выбор цели исследования и выдвижение задач обусловлены необходимостью увеличения уровня вовлеченных в экономику с высшим образованием.

**Цель диссертационной работы** – оценка влияния высшего образования на экономическое развитие РА, в этом контексте – выявление основных проблем связанных с компенсацией затрат на высшее образование, разработка предложений в связи с решением данных проблем.

Для достижения поставленных целей в диссертационной работе выдвинуты **следующие задачи:**

- изучать текущее состояние системы высшего образования РА, выявлять сформированные тенденции развития,
- раскрывать важнейшие показатели из сферы высшего образования, которые имеют положительную связь с экономическим развитием,
- оценивать влияние высшего образования на экономическое развитие,
- выявлять основные проблемы связанные с компенсацией затрат на высшее образование,
- моделировать связь между системой высшего образования и экономическим развитием.

В результате проведенного исследования получены теоретические, методические и практические результаты, из которых в качестве **научной новизны** можно выделить следующие:

- оценено влияние высшего образования на экономическое развитие: прирост рабочей силы с высшим образованием в 1 % приводит к приросту объемов ВВП в 1.35 %.
- было предложено к общему числу детерминантов фактора производительности добавить еще один фактор. исходя из этого, разработана: а) модель экономического роста, с учетом фактора “рабочая сила с высшим образованием”, б) модель оценки и прогнозирования экономического роста, основанная на более двух десятков переменных из 4 групп показателей (показатели характеризующие университетскую систему, показатели рынка труда, финансовые показатели научной деятельности, показатели области науки).

## HARUTYUN ALIK ARZUMANYAN

### EVALUATION AND PREDICTION OF THE INFLUENCE OF HIGHER EDUCATION ON ECONOMIC DEVELOPMENT OF THE RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 - «Economics, management of the economy and its spheres».

The defense of the thesis will take place on 15 June, 2017 at 14<sup>00</sup> o'clock, at 014 Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, Armenia, 0025.

#### ABSTRACT

Recently, more attention is focused on the study of human capital as a key lever for economic development. Human capital is viewed as an investment project from which compensation in the form of high incomes and economic growth is anticipated. One of the main components of human capital is considered the education of the population.

Relevance of the topic, the choice of objective research and extension tasks are determined by the necessity of increasing the levels involved in the economy with higher education.

**The purpose of the thesis** – evaluation of the influence of higher education on economic development of RA, in this context, the identification of major problems related to compensation of expenses for higher education, development of proposals for the solution of these problems.

In order to achieve the goals set in the thesis put forward **the following tasks** :

- examine the current state of higher education system of RA, identify trends generated,
- disclose crucial indicators of higher education which have a positive connection with economic indicators,
- assess the impact of higher education on economic development,

- identify the major problems related to compensation of expenses for higher education,
- model the relationship between higher education and economic development.

The study obtained the theoretical, methodological and practical results of which as a **scientific innovation** can be distinguished:

- It was evaluated the influence of higher education on economic development: the growth of the workforce with higher education in 1% leads to increase in the volume of GDP at 1.35%.
- It was suggested adding another factor to the total number of determinants of performance factor and on this basis has been developed: a) a model of economic growth taking into account the factor of "workforce with higher education", b) a model for evaluation and prediction of economic development was developed based on 4 groups of more than two dozen variables (indicators characterizing the system of institutions of higher education, labor market indicators, financial indicators of scientific activities, science indicators).